

**ԴԵՊՐԻՎԱՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՆՔՆԻՐԱՑՄԱՆ
ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Թարջումանյան Ս.Վ. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

silvitarjmanyanyan@yahoo.com

Ներկայացման ամս.՝ 24.07.2019

գրախոսման ամս.՝ 27.07.2019

տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Հոդվածը նվիրված է դեպրիվացված անձանց ինքնիրացման հոգեբանական նկարագրին: Դիտարկվել է անձի ինքնիրացման և դեպրիվացիայի խնդիրը, ինչ է դեպրիվացիան, ովքեր են դեպրիվացված անձինք և ինչ առանձնահատկություններ ունեն ինքնիրացման գործընթացում: Հոդվածում, մասնավորապես քննարկվում են դեպրիվացիայի հետևանքները, պարզ դարձնելով, որ դեպրիվացիան տարբեր մարդկանց վրա տարբեր հետևանքներ է թողնում՝ կազմելով նրանց հուզական պատկերը, սակայն կան որոշակի երևույթներ, որոնք շատ հաճախ են կրկնվում դեպրիվացված անձանց մոտ: Ենթադրվում է, որ դեպրիվացիան անձանց մոտ առաջացնում են որոշակի բացասական փոփոխություններ, մասնավորապես մանկական տարիքում ապրած դեպրիվացիան ազդեցություն է ունենում հասուն անձի ինքնիրացման գործընթացի վրա, խոչընդոտելով այն:

Հանգուցային բառեր՝ *դեպրիվացիա, ինքնագիտակցություն, ինքնիրացում, ինքնազնահատրական, հուզական պատկեր:*

Ինքնիրացումը՝ անձի կատարելագործումն է կյանքում և ամենօրյա գործունեության մեջ, այս աշխարհում սեփական յուրահատուկ ուղու, սեփական արժեքների և ժամանակի յուրաքանչյուր պահին սեփական գոյության իմաստի որոնումն ու հաստատումն է: Պրոբլեմի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ինքնիրացումը հնարավոր է այն դեպքում, երբ մարդն անձնային աճի համար ուժեղ դրդապատճառ ունի: Դա բարդ ճանապարհ է, որի ընթացքում անձը պետք է հաղթահարի լուրջ փորձություններ՝ կապված սեփական ընդունակությունները զարգացնելու, պոտենցիալ հնարավորություններն իրացնելու, սեփական անձնային խնդիրներն ու կոնֆլիկտները լուծելու՝ առանց արտաքին միջամտության: Հաճախ ինքն իրեն համապատասխանելը բերում է ուրիշների կողմից չհասկացման, դատապարտման, չընդունման ռիսկի: Ինքնիրացման երևույթն ունի մի շարք էական կողմեր, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ խնդրի լիարժեք հասկացման համար: Դրանք են ինքնակտուալացումը, մարդու իրական բնույթի արտահայտումը, ինքնարտահայտումը, ինքնակատարելագործումը, բարոյականությունը, հարմարումը, անհատականացումը, դրդապատճառ հանդիսացող ուժը, ազատությունը, երջանկությունը անձի հատկությունները [2; էջ 37]:

Մեր նպատակն է պարզել, ինչպիսի հետևանքներ է ունենում դեպրիվացիան հասուն տարիքում, մասնավորապես անձի ինքնիրացման գործընթացում:

Ինքնիրացումը՝ որպես նպատակ, դիտարկվում է անձի հետազոտություններում, որտեղ ուսումնասիրվում են ձեռքբերումները՝ որպես մետաարժեքներ: Ինքնիրացումը՝ որպես վիճակ, կապված է բավարարվածության գնահատման հետ: Ինքնիրացումը՝ որպես արդյունք, հաճախ ուսումնասիրվում է որպես անձնային զարգացման մակարդակ՝ հաջողություն-անհաջողություն չափանիշով: Ինքնիրացումը՝ որպես հանրագումար, կարող է դիտարկվել հետազոտություններում, որոնք ուղղված են կենսական ուղու ամբողջական ժամանակահատվածների (օրինակ, միջին հասունության ժամանակահատվածի) իմաստավորմանը կամ ամբողջական կյանքի գնահատմանը (ծեր մարդկանց համար): Այն որպես միջոց, դիտարկվում է փիլիսոփայական աշխատություններում: Հոգեբանական գիտություն մեջ ինքնիրացումը՝ որպես գործընթաց հետաքրքրություն է ներկայացնում [2, էջ 21]:

Ա. Մալրուն ինքնիրացում անվանել է մարդու ձգտումը ինքնակատարելագործման, ինքնազարգացման, ինքնարտահայտման: Նա ինքնակտուալիզացիա հասկացությունը ներկայացրել է որպես իր տեսության առանցքային հիմք, որը պայմանավորում է մարդու ինքնագոյության պահանջմունքը: Մալրուն ինքնիրացվող անվանում էր այն անձանց, ովքեր ապրում են լիարժեք կյանքով, ավելի լիարժեք, քան մյուս անհատները: Խոսքը գնում է ներուժի կիրառման ունակության մասին: Նա ինքնակտուալիզացիան դիտարկում է ոչ թե վերջնական վիճակ, այլ սեփական հնարավորությունների բացահայտման և իրագործման գործընթաց, որը չունի ավարտ [2, էջ 22, 5, էջ 57-74]: Ինքնիրացման ճանապարհին անձը պետք հաղթահարի հոգեբանական խոչընդոտները, լուծի կյանքի ընթացքում ծագած դժվարությունները: Ինքնիրացման հիմքում ընկած է հոգեբանական գոյացությունների արդիականացումը, որն ապահովում է անձի ներուժի իրականացումը: Այն հիմնվում է ինքնակազմակերպման գաղափարի վրա, ինչը երթադրում է մարդու կողմից իր ողջ ուժերի, ընդունակությունների, ռեսուրսների և հմտությունների առավել արդյունավետ օգտագործում՝ իր անհատական անկրկնելի իրավիճակներում, արտաքին և ներքին էներգիայի հասնելու նպատակով: Ըստ էության՝ ինքնիրացումը ներառում է կատարելագործման ձգտում, որի հիմքում սեփական ուժերն ու ընդունակությունները իրականացնելու անձի բարձրագույն պահանջմունքն է: Այն իր մեջ ընդգրկում է ոչ միայն սեփական հնարավորությունների մշտական աճն ու գործունեության որակի բարձրացումը, այլև հասարակական նորմերի ու արժեքների ընդունումն ու յուրացումն անձի կողմից [1, էջ 81]:

Առավել կարևոր և արդիական է անձի ինքնիրացման հիմնախնդիրը դեպրիվացիա ունեցող անձանց մոտ: Դեպրիվացիան հոգեկան այն վիճակն է, որը առաջացել է կյանքի այնպիսի պայմաններում, երբ անհատին որոշակի ժամանակահատվածում հնարավորություն չի ընձեռվել բավարարել իր որոշ հիմնական հոգեկան պահանջմունքները բավարար չափով: Դեպրիվացիայի հետևանքը կարող է արտահայտվել նորմալ էմոցիոնալ պատկերի սահմաններից դուրս չելնող փոքր տարօրինակություններով մինչև շատ խորը մտածողության և բնավորության զարգացման վնասով:

Ներկայումս ծնողների համար երեխայի հույզերի արժևորումը բարձրացել է համեմատած նախորդ դարերի հետ [3, էջ 41-47]: : Բարձրացել է նաև մոր և հոր հուզական նշանակությունը երեխայի համար: Եթե մինչ այս դեպրիվացիայի հիմք հանդիսանում էր երեխայի առանց մոր ապրելը, որի օրինակ են հանդիսանում մանկատան երեխաները, ապա հիմա պարզվում է, որ գոյություն ունեն մի շարք այլ պայմաններ: Շատ ավելի շատ են այն երեխաների թիվը, որոնք տանջվում են ծնողական սիրո պակասից՝ ապրելով հենց նրանց հետ: Այսպիսի պայմաններում երեխայի հոգեկան զարգացման համար գլխավոր վտանգը հոգատարության և սիրո պակասն է ընտանիքում: Ներկայումս դեպրիվացված երեխայի ամենատարածված տիպը ծնողազուրկ, մայրական սիրուց և հայրական հեղինակությունից, պաշտպանվածությունից զրկված երեխան է: Հետևաբար, եթե երեխայի հստակ դերը չի սահմանվել սոցիալական մեխանիզմի որևէ կարևոր մասի բացակայության պատճառով, այսինքն եթե ընտանիքում բացակայում է հայրը, մայրը, եղբայրներն ու քույրերը, կամ եթե բացակայում է հասակակիցների հետ շփումը, ապա երեխային կարելի է համարել դեպրիվացված: Դեպրիվացված երեխան վատ է պատրաստված կյանքի դժվարությունները հաղթահարելու, որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու, ինչպես նաև սոցիալական շփումներում, համագործակցություններում հանդես գալու համար: Նա տեղի է տալիս ինքնակազմակերպման, ինքնազարգացման և ինքնահաստատման հարցերում: Նա իրեն չի արդարացնի ամուսնության մեջ որպես հայր կամ մայր, ընկերության մեջ, մասնագիտական կյանքում, այլ մարդկանց հետ համագործակցության մեջ: Այսինքն նա սոցիալական կյանք վարելու մեջ ճկունություն հանդես չի բերի:

Հոգեկան դեպրիվացիայի հասկացությունը դեռ հստակ սահմանված չէ, և դա շատ վառ երևում է տերմինների բազմազանությամբ, որոնցով նկարագրվում է միևնույն երևույթը: Ամենատարածվածը, հատկապես անգլոսաքսոն գրականության մեջ, դեպրիվացիա տերմինն է, որը օգտագործվում է ինչ-որ բանի կորստի, որևէ կարևոր պահանջմունքի անընդհատ չբավարարված լինելու երևույթը նկարագրելու համար: Մյուս տերմիններն են՝ հոգեկան քաղցածություն, հոգեկան անբավարարվածություն, հոգեկան հյուծվածություն և նույնիսկ հոգեկան կախեքսիա [4; էջեր 101-103]:

Թեկուզ օգտագործելով տարբեր տերմիններ, բոլոր մասնագետներն էլ գտնում են, որ երեխան իր առողջ զարգացման համար առաջին հերթին սիրո և ջերմ զգացմունքների կարիք ունի: Եթե նա շրջապատված է բավարար ջերմությամբ և ունի հուզական հենարան, ապա դա փոխարինում է այլ հոգեկան բաղադրիչների բացակայությունը, օրինակ՝ որոշ պահանջմունքների անբավարարված լինելը, խաղալիքների բացակայությունը, դաստիարակության պակասը:

Դեպրիվացիայի մասին դասական աշխատությունները բավականին հոռետես եզրահանգման են գալիս. շարունակվող հոգեբանական դեպրիվացիայի հետևանքները վաղ հասակում շատ խորն են, դրանք մնայուն են և համարյա թե անփոփոխ են մինչև հասունություն: Շատ հետազոտողներ ենթադրում էին, որ գոյություն ունի

դեպրիվացիայի հետևանքների միայն մի պատկեր: Նրանք խոսում էին հոսպիտալիզացման, անալիտիկ դեպրեսիայի, փսիխոպաթոլոգիայի կամ ուղղակի «դեպրիվացիոն սինդրոմ»-ի մասին: Եթե դեպրիվացիոն խախտումը արդեն տեղի է ունեցել, ապա երեխայի տեղափոխումը ավելի բարեհաջող միջավայր արդեն չի օգնի [4, էջ 55-57]: Երեխան կմեծանա թերարժեքության բարդությամբ, չի կարողանա օգտագործել իր ներուժը, հետևաբար այսպիսի երեխաները չեն կարող լինել ինքնիրացված անձնավորություններ:

Սակայն հետագա աշխատությունները ցույց տվեցին, որ նախորդ նկատառումները հիմնավորված չեն: Վաղ հասակից նույն հաստատություններում ապրող երեխաների մոտ անձի տարբեր զարգացումներ են նկատվում: Տարբերությունը ավելի ցայտուն է երևում այն երեխաների մոտ, ովքեր տարբեր հասակում են դեպրիվացվել, տարբեր պատճառներով, դեպրիվացիայի տարբեր տիպերի արդյունքում [3, էջ 102-109]: Դեպրիվացիայի հետևանքը կարող է արտահայտվել նորմալ հուզական պատկերի սահմաններից դուրս չելնող փոքր տարօրինակություններով մինչև շատ խորը մտածողության և բնավորության զարգացման վնասով: Դրանք կարող են լինել նյարդային, հոգեկան և նույնիսկ սոմատիկ շեղումներ:

Եթե նույնիսկ դեպրիվացիոն խախտումները անուղղելի չեն համարվում միևնույնն է պետք է շատ դրական տրամադրվել դրանց անհետացման վերաբերյալ:

Կարծիքները ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ ծանր և շարունակական դեպրիվացիան երեխայի հոգեկան կառուցվածքի մեջ խորը փոփոխություններ է թողնում, որոնք կարող են մշտական լինել: Որքան փոքր է երեխան և երկար է դեպրիվացիան շարունակվում, այդքան ավելի քիչ հույս կա անհետ անցկացնել դեպրիվացիայի հետևանքները: Գոյություն ունի դասական փորձ հոգեկան զրկվածությունների խնդրի զարգացման հարցում: Սակայն յուրաքանչյուր դեպք դեպրիվացիայի ընդհանուր աստիճանակարգի մեջ մտնելը, իհարկե, չի փոխարինի դրա իրական պայմանների ախտորոշումը: Որպեսզի հասկանանք, արդյոք կան ինքնիրացմանը խոչընդոտող գործոններ, պետք է դեպրիվացիայի յուրաքանչյուր դեպքի ժամանակ տարբերել հուզական զրկվածությունը և դրդապատճառների պակասը, ավելի մանրամասն գնահատել ցանկությունն ու հետաքրքրությունն իրագործելու մտադրությունները, պոտենցիալ հնարավորությունների իրականացումը, զգացմունքները ընդունելու, ճանաչելու և աշխատանքը շարունակելու ունակությունը:

Ինքնիրացման կոնկրետ ձևերը, միջոցներն ու տեսակները տարբեր անձանց մոտ տարբեր են: Դրանում դրսևորվում է մարդու անհատականությունը: Հետևաբար ինքնիրացումը որպես երևույթ չափել հնարավոր չէ, և եթե ուզում ենք պարզել՝ արդյոք ինքնիրացման հասնելու տարբերություններ կան դեպրիվացված և «ոչ դեպրիվացված» անձանց մոտ, մենք պետք է դիտարկենք և համեմատենք դրա հետևանքներն ու արդյունքները [2, էջ 21]:

Ա. Մասլոուն գտնում է, որ ինքնիրացման գործընթացը բախվում է խոչընդոտների, երբ մարդը չի գտնում ինքն իրեն, երբ առկա են ինքնաճանաչման դժվարություններ, անհայտ է նպատակը, անձը դժվար է պատկերացնում ինքնիրացման

ուղիները, չկա պահանջմունքների և հնարավորությունների համադրում, գերակշռում է թերաթժեքության բարդույթը: Ինքնիրացման դժվարությունների հիմքում թաքնված է անձի վերաբերմունքը, որը նա տածում է իր և շրջապատի հանդեպ: Անձի ինքնիրացումը ենթադրում է առաջին հերթին ինքն իր, այլ մարդկանց և ամբողջ աշխարհի նկատմամբ վստահության բարձր մակարդակ այսինքն՝ վստահությունը դիտարկվում է, որպես ինքնիրացման երկրորդ պայման կամ բաղադրիչ [1, էջ 81, 5, էջ 281-297]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ընտանիքը կենտրոնական դեր ունի երեխայի հոգեկանի զարգացման հարցում: Այստեղ ամեն մի անդամը իր դերն է կատարում և բավարարում է երեխայի կենսական՝ ֆիզիկական, էմոցիոնալ, իմացական և բարոյական պահանջմունքները: Առաջին ժամանակաշրջանում, իհարկե, մայրն է, որը ոչ միայն հոգ է տանում երեխայի մասին, այլ նաև առաջին էմոցիոնալ փորձն է ապահովում՝ երեխային շոյելով, ժպտալով, իր ձեռքերի մեջ օրորելով և խոսելով իր հետ: Հոր դերը, որը երեխայի համար հանդիսանում է վարքի նորմերը սահմանող, վստահության և հեղինակության կերպար, ավելի ուշ է հայտնվում երեխայի կյանքում: Չի կարելի անտեսել նաև եղբայրների և քույրերի նշանակությունը: Տարիներ իր վեր երեխայի դեպրիվացման պատճառ էր հանդիսանում ընտանիքի որևէ անդամի ֆիզիկական բացակայությունը: Ներկայումս դեպրիվացիայի առաջացման գործոնները ավելի լայն են դիտարկվում, մասնավորապես կարևորելով ընտանիքի ընդհանուր մթնոլորտը, որը կախված է նրա անդամների փոխհարաբերությունից: Հետևաբար, եթե ընտանիքի որևէ անդամ չի կատարում իր դերը, երեխայի մոտ հոգեկան դեպրիվացիա առաջանալու վտանգ է հայտնվում՝ անկախ այդ դերը կատարող անձի ներկայությունից: Տագնապը, վախերը, ցածր ինքնագնահատականը, բարձր խոցելիությունը, որոնք այդքան բնորոշ են դեպրիվացված անձանց, կարող են խանգարել անձին ինքնիրացման գործընթացում: Թերաթժեքության բարդույթը չի թողնի անձին ինքնարտահայտվել, առավելագույնս բացահայտել և օգտագործել իր ներուժը և վերջապես ապրել լիարժեք կյանքով:

Տեսական վերլուծությունը հիմք է հանդիսանում ուսումնասիրություններ կատարել դեպրիվացված անձանց շրջանում ինքնիրացման ձևավորման խնդրի վերաբերյալ, հաշվի առնելով դեպրիվացիայի բոլոր տեսակները՝ հայրական, մայրական, քույրերի, եղբայրների, ամուսնալուծության հիմքում ընկած դեպրիվացիան, ինչպես նաև չափազանց արդիական և հոգեբանության մեջ հետաքրքրություն առաջացնող լիարժեք ընտանիքներում մեծացած ընտանիքի անդամների որևիցե մեկի դերի խախտման հիմքում ընկած դեպրիվացիան: Ուսումնասիրությունների հիմքում փորձելու ենք համեմատական տանել այն երիտասարդների հետ, ովքեր մեծացել են մանկատանը կամ խնամքի կենտրոններում, որպեսզի հասկանալի լինի ինքնիրացման հիմնախնդիրը:

Գրականություն

1. **Հարությունյան Ն.Ա.** Անձի ինքնիրացման առանձնահատկությունները ամուսնական հարաբերություններում, Արդի հոգեբանության գիտական հանդես, Եր., «Անտարես» հրատ., 2018, էջ 81.
2. **Պապոյան Վ. Ռ., Գրին Է. Ա., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ., Սարգսյան Դ. Յ., Մուրադյան Է. Ա., Լաչինյան Լ. Լ.** Անձի ինքնիրացման հիմնախնդիրը: Ուսումնառական ձեռնարկ, Խմբ.՝ Ամիրյան Ս.Ս., Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ – 102.
3. **Бойлби Дж.** Привязанность; Перевод с английского; Данное издание выпущено в рамках проекта «Translation Project» при поддержке Института «Открытое общество» (Фонд Сороса) – Россия и Института «Открытое общество» – Будапешт, 2003 г.
4. **Лангмейер И., Матейчек З.** Психическая депривация в детском возрасте. Авивценум. Медицинское издательство Прага, ЧССР. Издание 1-ое русское–1984 г.
5. **Маслоу А.** Самоактуализация., М., МГУ, 1982, с -324.

ПСИХОЛОГИЧЕСКОЕ ОПИСАНИЕ САМОРЕАЛИЗАЦИИ У ДЕПРИВИРОВАННЫХ ЛИЧНОСТЕЙ

*Тарджуманян С. В. (Ереванский Государственный Университет,
Ереван, Армения)*

Статья посвящена психологическому описанию самореализации у депривированных лиц. Проведен литературный обзор проблемы самореализации и депривации: что такое депривация, кто такие депривированные личности и какие особенности они имеют в процессе самореализации.

В статье особенно обсуждаются последствия депривации, проясняя, что несмотря, на то, что последствия бывают разные для разных лиц, сформировывая их эмоциональные образы, есть определенные явления, которые часто повторяются в этих случаях. Предполагается, что депривация вызывает некоторые негативные изменения, в частности, в детском возрасте пережитая депривация влияет на самореализацию взрослого человека, препятствуя его формированию.

Ключевые слова: депривация, самосознание, самоактуализация, самооценка, эмоциональный образ.

PSYCHOLOGICAL DESCRIPTION OF SELF-REALIZATION AMONG DEPRIVED PEOPLE

Tarjumanyan S. V. (Yerevan State University, Yerevan, Armenia)

The article is dedicated to the psychological description of self-realization among deprived people. It was observed the problem of self-realization and deprivation, what is

deprivation, who are deprived people, and what specifications are there in the process of self-realization.

The article discusses the differences between the consequences among different people, making it obvious- that even though different people having the same situation of deprivation will have different psychological images depending on their self-schemas- there are some phenomena that are very typical for deprived people. It is assumed, that deprivation causes some negative changes in person's psyche; especially the deprivation that person had during childhood will influence on the process of self-realization in adult life, by preventing its forming.

Keywords: *deprivation, self-consciousness, self-actualization, self-esteem, emotional image.*